Հայաստանի Հանրապետություն

Արարատի մարզ

Գետափնյա համայնք

Ավագանու որոշում թիվ՝ 22-Ն
23-11-2012թ.

ԳԵՏԱՓՆՅԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝

Ավագանին որոշեց՝

Հաստատել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինության (տեղադրման) թույլատվության համար, տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

1.1 Մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական, բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ - 7500 դրամ,

1.2 Սույն կետի «ա» չնախատեսված օբյեկտների համար
բ.ա/ 201-ից մինչև 500 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝- 15000դրամ
բ.բ/ 501-ից մինչև 1000 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝- 25000դրամ
բ.գ/. 1001 և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝- 35000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

1.3 Մինչև 20 քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝- 1500 դրամ

1.4 20և ավելի քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝- 2500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլատվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

2.1 Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխությունների համար՝ - 1500 դրամ,

2.2 Բացի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար, սույն հոդվածի 1-ին կետով սահմանված կամ շենքերի գործառական նշանակության փոփոխությունների մասով:

2.3 Նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվել է -2500դրամ,

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվել է՝

4.1 Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ -5000 դրամ,

4.2 Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ - 7000 դրամ,

5. Համայնքի տարածքում՝

5.1 Բացոթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվել է յուրաքանչյուր օրվա համար՝ - 350 դրամ

5.2 հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 150000 դրամ

5.3 Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվել է՝ -60000 դրամ,

5.5 Համայնքի տարածքում մարդատար տաքսի (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվել է՝ - 10.000 դրամ,

6. Համայնքի տարածքում շինության կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխահատուցման վճար սահմանել ՎՆ 5000 դրամ

7. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար, տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվել է՝ -3000 դրամ,

9. Աղբահանության վճար- համայնքի մեկ բնակիչի տեղական տուրքը մեկ ամսվա համար սահմանվել է 50 դրամ,

10. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար, մասնակիցների վճարը սահմանել՝ -3000 դրամ,

11. Սույն որոշման 1-2-3-րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0,5 գործակիցը:

Ավագանիներ՝ Արթուր Աշոտի Ազատյան

Անուշավան Հակոբի Դալլաքյան

Հարություն Շմավոնի Թամիրյան

Գարիկ Հարությունի Ղազարյան

Արփենիկ Սեպուհի Շահբազյան

Ալբերտ Ատոմի Պետրոսյան

Աշոտ Ռոբերտի Վարդանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԱԶԱՏՅԱՆ